

և թէ խիստ քիչ ժամանակ կը տեւ-
էր այն, որովհետեւ իրենց խատու-
թեամբն և մոլոխական օրինաց հա-
կառակ վարդապետութեամբ ժողո-
վը դոց համակրութիւնը չէին կրնար
ստանալ, և իրենց հակառակորդաց
հզօր ազգեցութեան չէին կարեր յաղ-
թեւ:

Ի յաջրտն:

Անգլիան և ռուսական եկեղեցւաց միաս-
նութեան ինդիրը:

Ոտերս քանի մի չայ լրագրաց
և հանդէսներու մէջ կարդացած են
մերայինք Անգլիական եկեղեցւոյն
Որուսական օրթոսոքսոս եկեղեցւոյն
հետ միանալու խնդիրը, որ թէ-
պէտ և ըստ մեզ դժուարին՝ ըսեմ
թէ անհնարին ձեռնարկութիւն մի
է, այսու ամենայնիւ շւրոպական լր-
բագիրք քիչ շատ կարեւորութիւն
տուած են սոյն խնդրոյն. վասն որոյ
հարկ կը համարիմք և մեք քանի մի
տեղեկութիւններ տալ կարծեցեալ
կրօնական խնդրոյն վրայօք՝ եւրոպա-
կան լրագիրներէ առնելով. վասն զի
Անգլիական եկեղեցւոյն Որուսական
կամ որ նոյն է Հունական եկեղեցւոյ
հետ միանալը՝ մեր՝ ազգային եկեղեց-
ւոյն ալ մօտենալ ըսել է:

Ծողոքականութիւնը՝ կըսէ Գաղ-
ղացի պարբերական շանդէս մի,
սյս միջոցիս Ճգնաժամի մէջ կը գըտ-
նուի: Այս իմացական Ճգնաժամը
ինչպէս Գաղղիոյ՝ նոյնպէս Անգլիոյ
մէջ եւս կոյ քանի մը ժամանակէ ՚ի
վեր: Այս խնդիրը այն մարդոց մէջ
կը յուղուի, որոնք հաստատ բռնած
են քրիստոնէութեան գերբնական
մասը՝ Քրիստոսի Կյատուածութիւնը
հաստատելով, և անոնց՝ որոնք ու-

րանալով՝ Քրիստոսի Կյատուածութիւ-
նը, և քրիստոնէութիւնը իբր պարզ
փիլսոփայութիւն մի ենթադրելով,
կ'ուզեն եւ կը պնդեն քրիստոնեայ
մեալ:

Անգլիոյ Օքսֆօրտ քաղքի մեծ
համալսարանին մէջ քասան և հինգ տա-
րիէն ՚ի վեր է որ դպրոց մի հիմնար-
կուած է Տօքթօր Շիւզէի տեսչու-
թեանը տակ, որ Լուրոպայի մէջ եր-
րայերէն գիտցող գիտականաց երե-
ւելիներէն մէկն է: Այս դպրոցը,
որ Անգլիկան եկեղեցւոյ խիստ ջերմ
ու մոլեռանդ մասին մէջ հաստատ-
ուած է, նպատակ ունէր իրեն Նոր-
ուովմէական եկեղեցւոյն վարդապե-
տութենէն ընդունել բոլոր հարկա-
ւոր եղած մասերը առանց բողոքակա-
նութիւնը ձգելու: Շիւզէութեան
դպրոցի ամենէն երեւելի անգամնե-
րը իրենց գաղափարները յայտնած
են գրութեամբ մի Շառ ՚ի վէրայ Ներ-
կայ ժամանակին ըսուած, որ խորին ազ-
գեցութիւն մի ըրած է Անգլիոյ մէջ:
Անգլիկան եկեղեցւոյ մէջ կամաց կա-
մաց սկսաւ տեսակ մի եկեղեցի հաս-
տատուիլ, ինչպէս ըսինք, Շիւզէի
տեսչութեանը տակ, որ զիւր աշա-
կերտները բողոքականութիւնը կա-
թուիկութենէ բաժնող վերջին սահ-
մանագլուխը բերաւ հասուց, ուսկէ
ալ անդին աւելի հեռանալու բան
չժողուց: Բայց իւր հետեւողներէն
շատերը աւելի կտրուկ ու համառօտ
քայլ մի ըրին, զոր ինքը չէր ուղած
ընել: Տօքթօր Շիւզէյ այսպէս եր-
կու եկեղեցիները իրարմէ աւելի չը-
հեռանալու համար սահման մի որո-
շեց, որ կ'երեւար թէ կաթոլիկու-
թեան մօտենալու նշան մի էր, բայց
հիմակ կ'երեւի որ ինքն իւր պըզ-
տիկ ժողովուրդովը օրթոսոքսոս եկե-
ղեցւոյն ծոցը մանելու կը մօտենայ:

Այս նպատակաւ մօտերս Ուուսական և Անդլիկան Եկեղեցւոյ քանի մի Եպիսկոպոսաց մէջ խորհուրդ Եղած է, որոշում մի տալու համար : Գիտենք որ Անդլիկան Եկեղեցւոյ երկու բան կը պակսի, մէկ մի հնութիւն, երկրորդ՝ առանդութիւն . Եւ խորհուրդը յառաջ տանելու գրգիռ Եղողները կը յուսային որ բողոքականաց և Յունաց մէջ միաբանութիւն հաստատելով այս երկու առաւելութիւնները ընդունել տան Անդլիկան Եկեղեցւոյն : Ի՞այց Լորտ Ի՞ալմէրսթոն բողոքական եպիսկոպոսաց կարգին մէջ քանի մի ստորին աստիճանի Եկեղեցականներ մոցընելով, և ասոնք ներկայ ժամանակիս բասիֆնակէստ (բանաւորական) ըսուած տեսակ մի կրօնական կուսակցութեան ներշնչութեամբը տուկորուած ըլլալով, բացէ ի բաց արգելք Եղան ժողովրին մէջ Եղած խորհրդոյն, ըսելով՝ թէ ասսնց Ճիգը կաթոլիկութեան կառաջնորդէ, ուսկէ ամեն բանէ աւելի իրենք հեռու կենալ կ'ուղեն :

Իսկ Դաղղից մէջ հռովմէական Աթոռոյն ջերմ կուսակից Եղող կղերականք բողոքական և օրթոսոքոսու Եկեղեցւոյ միաւորութեան համար Եղած խնդրոյն տարբեր տեսութիւն մի տալ կ'ուղեն . ու կը համարին թէ Անդլիկան եպիսկոպոսաց դէպ ի բասիօնալիստներուն միտելին, առաւելապէս դէսլ ի կաթոլիկութիւն մօտենալ ըսելէ . մինչեւ անդամ լրագրին մէկը կ'ըսէ, թէ այս օրերս բողոքական մասը Դաղղից մէջ պապական Երեւելի եպիսկոպոսաց հետ խորհրդակցելէն յետոյ, և անոնցմէ՛ իբր առաքելական յաջորդներէ օրհնութիւն խնդրելէն զինի, Հռովմէ ալ պիտի Երթան Պիոս Թ. սրբազն Հայրապետին հետ խոսակցելու :

Այս միաւորութեան ինդրոյն տարբեր տարբեր տեսութիւն տըրուելէն, սա կը մակաբերեմք որ բողոքական և ուուսական Եկեղեցիներուն միանալը անգործադրելի խնդիր մի է, մանաւանդ որ Անդլիկան Եկեղեցւոյ մէջ ալ ամենափոքրիկ մէկ մասն է հետամուտ Եղողը այս բանիս . ուստի հիմակու հիմայ այսպիսի ձեռնարկութեան մի յաջողուելուն խոհուն ու մոսածող գլուխը չհաւատար երբէք : Եթէ բնաւ երկու Եկեղեցիք իրարու հետ միանալու ըլլան, անշուշու քաղաքականութիւնը, ըսել կ'ուղելք քաղաքական շահերը պիտի ընեն . իսկ քաղաքականութիւնը մի որ երբէք հաստատուն սկզբունք մի չէ ունեցեր օտար յարաբերութեանց մասին և զիրնար ունենալ, ըսել է թէ այն ալ չպիտի կարենայ այդ միաւորութեան օդնելու : Քրիստոնէութեան սկիզբէն ի վեր փորձուած բան մի է որ, աւելի դիւրին Եղեր ու յաջողեր է ընդհանուր Եկեղեցիի մը պառակտիլ ի մասունս և ազգային Եկեղեցիք զանազան հերձերու բաժնուեիլ, քան թէ բաժանեալները միաւորել : Եկեղեցական պատմութեան տեղեակ անձինք իրաւունք պիտի տան ըսածիս, գիտնալով միանդամյն թէ մենք ալ իրենց պէս միութեան փափաքողք Եմք, ըստ Տէառն բանի թէ « ուր իցեն յօղով եալ երկու կամ Երեք յանուն իմ, անդ եմ և ես ո. ապա որչափ եւս առաւելներկոյ պիտի ըլլաց Տէրն մեր, Երբ երկու կամ Երեք Եկեղեցիք միատեղ ժողովուած ըլլան քրիստոնէական սիրով և բարյական կապակցութեամբ :